

ՍԱՅՆԵԱԳՐԱԿԱՆ

Ս. ՄԱՀԱՐԻ ԵՒ Ս. ՄԱՀԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԹԻՖԼԻՍԻ ԵՐԵՄԻԱ ՏՈՒՆԱՐԱՐԱՆԻ ԹԵՄԵՆ՝



ԴՐՔ ՄԱՀԱՐԻԿԵՆՆԱԳՐՈՒ-
ԹԻՒՆԸ ՄԵՐ ՀԵՆՐԵ ՀԱ-
ՍԵՆ Է ԵՐԿՈՒ ԽՈՒՄ-
ԳՐՈՒԹՅԱՆ՝ առա-
ջինը՝ որ լցւոյ է տեսել
1833 թուին Վենե-
տիկում, աւելի ընդար-
ձակ է եւ շարագա-
տութեան կողմից նկա-

տելի ձերպով տարբերում է երկուորդից, որը լցւոյ է տեսել 1854 թ. դարձեալ Վե-
նետիկում՝ Սոփերք, կոչուած շարքի մէջ։
Վերջերս (1894 թ.) վերոյիշեալ երկու խմբա-
գրութիւններն եւս ապագրութեան մի գրքի մէջ։
Այս երկու խմբագրութեանց մասին քննական
գրականութեան մէջ յայտնուեցին տարբեր
կարծիքներ։ Վենետիկ Գլխավորները՝ Նոյն
խկ մինչեւ այսօր կորիւնի խական խմբագրու-
թիւնը համարում են երկրորդը, այն է
աւելի համառօտ եւ գրական տեսակետից աւելի
հարմիր կազմած խմբագրութիւնը։ Սակայն
խնդրի խոր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս,
որ համառօտ խմբագրութիւնը ինքնուրոյն մի
գործ չէ եւ կազմուած է, ինչպէս եւ նմա-
դրում եմ, խորհնացու զօրեղ ազդեցութեան
տակ, եւ հետեւաբար իւր ներկայ գիշերով հա-

* Ի նկատի առնելով, որ մեր տաճկահայ եղբայր-
ները անձնական են ծանօթանալու յարգ. Պրոֆ. Գր. Գր.
Խաչատրեանի վերջնոր ի լցւոյ համար «Археологическо-
му музею в Метрополитенском Музее Хоревских» [«Հայ
Արխեոլոգիկ Մուզէյն Խորեանցու Հայոց պատմութեան
մէջ»] փորձ աղբիւրների քննադատութեան, մասն
ա. հետազոտութիւն (էջ 3-4+400) մ. ք. Նիւթեր
(էջ 143) Մոսկուա 1903 թ. խորագիրը կողմ ստուա-
րանատոր աշխատութեան նստ, որու լեզուն լիւսնա-
լու պատճառով — ուստի մնաց այս հատուածով սկե-
զները թարգմանել վերոյիշեալ աշխատութեանց որոշ
նկարագրերը չհասցուածներ։ Աս այժմ առաջա-
րում ենք յոյն գլուխը։

Ն. Սարգ. Հ. Ռ. Սարգսիսանի, քննախնայ Սար-
գիսիսի մասին 1890, էջ 108 եւ հետ. նաեւ «Կորիւնի
1894 թ. հրա. յատարարը» Նոյն կարծիք է նշնպէս
Երզնկայի Հայագիտ. Վոյնքերը [«Հանդէս» 1903. Գր. 1.]

զիւ թէ թ. դարուց առաջ գրուած լինի՝ Առա-
ջին կամ ընդարձակ խմբագրութեան հարա-
դատութեան ապացոյցներ են ի միջի այլոց այն
մի շարք համապատասխան եւ նոյնանման կտոր-
ները, որ ունի մեր այս խմբագրութիւնը համա-
մատած Վալար փարպեցու հետ (պատմութեան
ա. մասում հայոց նշանագրերի գիւտի մասին),
որը օգտուել է կորիւնից եւ մասամբ նաեւ
Ագաթանգեղոսի հետ, որի վերջնական խմբա-
գրութեան վրայ Ս. Մաշտոցի կենսագիրը զօրեղ
ազդեցութիւն է ունեցել։

Այսպիսով ուրեմն մի կողմից ունենալով
կորիւն (առաջին խմբագրութիւնը), միւս կողմից
Վալար, մենք կարող էինք վերատառգել եւ
ճշգրտել խորհնացուն։

Սկսելը Հայոց նշանագրերը գտնողն ա-
ն ունից։

Բոլոր հին հեղինակները մինչեւ Ը դարը
Յ. Բ. զօր օր. կորիւնը, եզնիկ կողբացին,¹
Կ. Պոլսոյ Կաթարիար Պրոֆ. (390—446 թ.)
«մեր Երանելի հայոց ուղղած թղթում»² Ղա-
զար փարպեցին,³ Աբրահամ Կաթողիկոսը⁴
(Ջ. Գ.), Է դարու անանուն հեղինակը,⁵ Թով-
հան Օձնեցի կաթողիկոսը՝ Ը դարու սկզբում,
Մովսէս Կաղանկատաւացին (Է դարու հին խմբա-
գրութեամբ),⁶ — Մաշտոց՝ են անուանում

1 Նորայր իր հետազոտութեան մէջ կորիւնի մա-
սին (էջ 397 եւ շար. Թիֆլ. 1900) երկրորդ խմբագրու-
թիւնը կնդգ կորիւն է անուանում եւ նրա կազմուելու
ժամանակը հասցնում է մինչեւ ՅԱ եւ ՃԻ դարերը։

2 Սկսած են վերագրում «Եզնիկ» առ Մաշտոց. տե-
ւ. Ռ. Սարգիսիսան քննութ. Ագաթանգ. մասին էջ 383։

3 «Կաթողիկոսութեան հայկական խմբագրութեանց
հարկեր» Ջարդաւալ. Վենետ. 1889, էջ 664. «Գիրք
Թղթոց» էջ 1 եւ 9 (Թիֆլ. 1901)։

4 Վալար փարպեցու պատմութեան մէջ առնել տեղ
սխալում է Մաշտոց բացառութեամբ մի հատուածի (էջ
39—41), որտեղ նոյն տեղէ կոչում է «Կաթողիկոս» Այս հա-
տուածի յետոյ ներմուծուած լինելու մասին կը խոսուի մի
փոքր յետոյ։

5 «Թողթ Գրք առ եպիս. Կիրիլոս. տեւ Ունիւա-
նէս հրա. Վալարեպատ մ. ք. էջ 84։

6 Ընդործնողներից փոքր թիւ չառնաւ տեւ ձեւով
Μασιήν Եղոն τόν μακάριον, տեւ Migne, Patrol. s. g. t.
127, p. 901.

7 «Կաթողիկոսութիւն» Վենետ. էջ 66, «Գիրք
Թղթոց» էջ 220։

8 Հնում. Հմմտի էջ 71, 72, 160, 176 եւ միայն երկու
տեղ (էջ 69 եւ 73, եւ Պարպեցի հրա. 189—195) եւ այն
իւրաքանչեւում եւ ոչ բնագրում սխալում է «Կաթո-
ղիկոս»։

9 Կան ընթերցուածք Մաշտոց, Մաշտոց, Մաշտոց
եւ Մաժաղը։ Այս անունը թէեւ տակաւ, բայց պատու-
հում է մասնաւորութեան մէջ. Գր. արում Ստեփան Սիւնեցու
Պատմութեան մէջ (հրա. Է. Գր. էջ 18) սխալում է տեւ
հարկել Մաշտոց, որը Սիւնեցու մտաբանութեան եւ նշա-
նակուել է Ներեալ եւ Թովհանեան Բ (Ջ. Գ.) կաթողի-

Հոգեակար սուրբ գործչին: Ինքը խորենացին իւր Պատմութեան Բ գրքի սկզբում, այսինքն այնտեղ, որտեղ նա անցողակի յիշում է երանելի Ուսուցչին, նշնակէ Մաշտոց է կոչում (միայն մի անգամ), սակայն յետոյ Գ գրքի վերջում, որտեղ նշն անձին ծուիրում են մի քանի գրողներ, աւելի քան երեսուն գեղարուժ այլ կերպ չէ կոչում նրան, բայց միայն ՄԵՍՐՈՎԱՅ: Մովսէս Խորենացուց յետոյ, մեր բոլոր մատենագիրները, գոյա թւում նաեւ Կարիւնի երկրորդ խմբագրութիւնը, Հետեւելով նրան սկսեցին գլխաւորապէս գործ անել ՄԵՍՐՈՎԱՅ անունը, իսկ մի քանիսը երկու անունն եւս, Համարելով մէկը իրեն իսկական անուն, իսկ միւսը մականուն: «Վարդ Ս. Ներսիսի, (էջ 110) ըստ երեւոյթին այդ մտքով գործածութեան առաջին օրինակը սուսաւ, բայց յայտնի չէ — քիչ տեղեկութիւնների վրայ հիմնուած:

Իսկապէս քիչ է նշանակում «Մաշտոց», Գարագաշեան՝ այս անունը յունական մծտոց բառից է առաջացած համարում, որ նշանակում է, ըստ նորա, «բարձրութիւն», հաւանօրէն եկեղեցական օրենքի տիրադատ մտքով, որը ստացել էր Ս. Մաշտոց Բիւզանդիոնում՝ նման «Ալուփոս» — Ἀλουφτος («անխոն») կամ ըստ խորենացու եկեղեցիական — Ἐκκλησιαστικῶς — տիրապետներն:

Եթէ յիշուի «Մաշտոց» անունը առաջացած է մծտոց-ից, հայապ որ կանոնով հայերս առաջին հնչիւնը օ փոխել ենք — չի, իսկ երկրորդ ց ց-ի:

Բայց ի գրանից պէտք էր նախապէս ապացուցանել, թէ Բիւզանդիայում գոյութիւն ունէր մծտոց եկեղեցական տիրադատ, որ Գարագաշեան չէ անուշ: Մծտոց բառի նախնական նշանակութիւնն է «պտուղ», «կործք», յետոյ «սախք» (կենդանիների) եւ վերջապէս «բար-

կաններ թղթերում — «Մաշտոց, եպիսկոպոս խորենացեաց (Ջարբանաւ, Պատմ. հայ գրողութեան մ. ա. սիւր. Գ. էջ 400—401, Ստեփ. Օրբէլ. էջ 66 եւ Մ. Կաղանկ. էջ 95, հրտ. Եփեսի). յայտնի է նաեւ Մաշտոց անունով կաթողիկոս ի 897:

«Քննչ. Պատմ. Հայոց, Գ. էջ 193, Գ. էջ 22: Գ Նման, ըստ իւր, քիչ հասանկան ստուգարանում է առաջարկում Գարագաշեան (Գ. 22) նաեւ «Մեռուկ», առնու, առաջացած համարելով պարսից Գ ՄԵՐԶԻՔ բառից, «գրագիր», «քարտուղար» նշանակութեամբ, սակայն թէ ինչպէս «միւլիֆիք» կարող էր «Մեռուկ», առաջ գալ, այդ մասին լուում է նա: Հ. Բ. Սարգիսեան (Աշխատանք. էջ 404) «Մեռուկ» առարկան Մար-Սիրով — այսինքն — «սեր Սերովեթից» համարում առաջացած, որ ինձ նշնակէ կամայական է թ. ս. մ:

ձրութիւն», «բարձունք», որպէս եկեղեցական տիրադատ գոնէ Սուիդասի (Suidas) բառարանում չէ յիշում:

Ինձ թւում է, որ միւլ հետաքրքրող այս անունը կարելի էր պակաս իրիպաութեամբ բացատրել հայերեն լեզուի մաշտը բայարմատից — մաշտ, որ նշանակում է «մաղբեր թափուել», «ճաղատակաւ» -ոց մասնիկով կը նշանակէ «անհեր», «ճաղատ», թէեւ «մաշտել», բառը կարող է ունենալ նաեւ մի այլ նշանակութիւն, որ միւլ հասած յիշատակաբանների մէջ չի պահուել:

Ինչ վերաբերում է եկեղեցական ծիսարանի կամ Արարողագրի «Մաշտոց» կոչմանը, ինձ թւում է, հաւանակ մեր բանասիրութեան մէջ ընդհանրացած կարծիքին, որ այդպէս կոչուել է ծիսարանը կաղնդի, աւելի ճիշտ նրա խմբագրողը Մաշտոց գրտնակն կաթողիկոսի անունով, որը վարում էր կաթողիկոսութիւնը թ. գարու. նշն իսկ վերջերում:

Այսպէս թէ այնպէս մի բան աներկբայելի է, որ Հայոց տառերը գտնուի իսկական անունը «Մաշտոց» էր, ուստի եւ պէտք է վերականգնել այդ անունը:

Մաշտոցի կենսագրութիւնը եւ Հայոց տառերի գիւտի պատմութիւնը խորենացին տալիս է ընդհանրապէս համաձայն իւր աղբիւրների — Կորիւնի եւ Ղազարի, բայց թողի է տալիս նոցա համեմատութեամբ նաեւ բաւական կարեւոր շեղումներ: Օր. «Մաշտոցը ըստ նորա (Վլ. իւէ) «անեղ եւ ուսեղ (էր) առ մեծին Ներսիսի», — ցուցմունք որ ըստ մեծայն հասանկանութեան փոխ առած է «Վարդ Ս. Ներսիսի»՝ գրաւորից եւ որը հազիւ թէ համապատասխան է իրականութեան: Մեծին Ներսէս ինչպէս երեւում է փառաստից եւ կարելի է մակարերել Ամփանոսից վախճանուց 373 թուից ոչ ուշ, որովհետեւ հետեւեալ իսկ տալիս վաղեմիախոս կայսեր († 378) հրամանով նենգութեամբ սպանուց հայ Պապ թագաւորը, որին մեղադրում էին յիշեալ հայ կաթողիկոսի թունաւորելու գործում: Իսկ Ս. Մաշտոց վախճանուց, ինչպէս յայտնի է, 439 թ., այսինքն Ս. Սահակի մահից († 438) վեց ամիս յետոյ, այն է «Թագեկերտ Բ. ի (438—457 թ.) թա-

1 Յես. Ն. Շիրազուլ «Ընդհանրական» հրտ. Երուսաղէմ, էջ 274: Համարում «Հայոց Պատմ. Գ. 769:

2 Յես. Թ. իւր յայտն. 4. Տաշիւանի «Երուսաղէմ հայ Էկե. Մ. Գ. Վ. Երուսաղէմ 1895, էջ 64:

3 «Սոփիք» Զ., էջ 83, 110:
4 Յես Սոփի Էնտաղութեան էջ 186—187:

գաւորութեան առաջին տարին՝ Այս հաշուով անգամ, եթէ ենթադրենք, որ Մաշտոց ապրել է 75 տարի, ապա նա Ս. Ներսիսի մահուան տարին 8—9 տարեկանից աւելի չէր կարող լինել։ Ոչ նուազ նշանակութիւն ունի եւ այն հանգամանքը, որ այս մասին լուծւում են, թէ՛ Ս. Մաշտոցի կենսագիրը (նշին իսկ երկրորդ խմբագրութիւնը) եւ թէ՛ Ղազար Թարգմանը, ինչ վերաբերում է տառերի գիւտի պատմութեան խորնացին զարգացել է այն նոր մանրամասնութիւններով, որոնք չեն հաստատուում հին աղբիւրներից։

Պէտք է դիտել, որ մինչեւ Հայոց տառերի գիւտը Հայաստանում — արքունիքում եւ պետական վարչութեան մէջ «արքունի գրիչը» ինչպէս որոշակի ստում է Ղազար,¹ գործ էին անում հրովարտական եւ զատաստանական վճիռների մէջ ասորիի եւ յոյն լեզուները, միւսնայն ժամանակ ասորերէնը գործածական էր նաեւ եկեղեցական պաշտամունքներում։² Եւր Մաշտոցն առաջին անգամ յղացւած Հայոց տառերը գանձում բախտաւոր միջոցը, եւ այդ միջոցը համակրութեամբ ընդունեց Ս. Սահակ կաթողիկոսից, նորա դիմացին այդ ժամանակայ Հայոց թագաւոր Վառամպուհին, որը, ի պատասխան նոցա առաջարկութեան, յայտնեց, թէ ինքը առաջուց լսած է եղել դանիէլ անունով մի Ասորի եպիսկոպոսի մասին, որի մօտ իբր թէ գտնուում էին Հայոց տառեր։ Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի թախանձանքով ուղարկւում է Վահրիճ անունով մէկը արքայական հրովարտակով այդ նշանագրերի մասին Վառամպուհին հաղորդող՝ Հաբէլ երեցի մօտ (որը յիշեալ դանիէլի բարեկամը կամ ազգականն էր) այդ նշանագրերը Հայաստան բերելու։ Հաբէլ չտապում է դէպի դանիէլ եւ գտնելով նրա մօտ ցանկացեալ նշանագրերը, բերում է Հայոց թագաւորին եւ կաթողիկոսին։ Սակայն երբ սկսում են գործադրել, տեսնում են, որ այս այբուբենը Հայոց լեզուի բոլոր հնչիւններն աշխարհայեցելու համար անկատար է, ուստի ինքը Մաշտոցը, որն այնչափ ոգեւորուած էր այս գաղափարով, իւր հետ վերցնելով մի քանի աշակերտներ՝ ուղեւորուեց Ասորիք («ի կողմանս Արամի») յուսալով՝ թէ հնուա անձանց գործածեցութեամբ կը կազմէ Հայոց լեզուի լիւ-

կատար այբուբենը։ Նա այս նպատակով կանգ է առնում Ասորոց երկու քաղաքներում։ Արդում եւ Եփեսոսյանում, ուր տեղական եպիսկոպոսներն Նիսիսի եւ Բաբելոնս ընրում են համակրալից ընդունելութիւն են ցոյց տալիս։ Իւր հետ առած երիտասարդներին Մաշտոց երկու խմբակի է բաժանում. մի խումբը անգլաւորելով Ասորոց դպրոցում Եփեսոսյ մէջ, ուր բնակւում էր եւ ինքը,³ միւսն ուղարկւում է Սամոսատ քաղաքը Եփեսոս գետի վրայ, Յունաց դպրոց՝ այս երկու լեզուներն ուսանելու։ Նշին Եփեսոս քաղաքում Ս. Մաշտոցը մնաց մի առ ժամանակ նուիրելով իւր անձը խոտմսեր կեանքի, պահեցողութեան ու աղօթքներին եւ շարունակ զգալուելով հայերէն նշանագրերի գիւտի հոգսերով։ «Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ, ասում է Կորին, վառ իւրոյ ազգին բարեաց ինչ օժան գտանելոյ, որում պարգեւէր իսկ միձեռ յամենաշնորհոյն Աստուծոյ... Նորոգ եւ դանիէլի աշուխ (sic) իւրով նշանագիրս հայերէն լեզուին, որոնց նա անյապաղ սկսեց անուններ տալ եւ որոշ կարգերի վերածել, ապա եւ կապել եւ վանկեր յօրինել։ Եւստ այսորիկ նա հրաժարական տալով ասորի եպիսկոպոսներին եւ իւր հետ վերցնելով իւր աշակերտներին (որ տարուս անա պարզուեմ էին ուսանում), ուղեւորուեց Սամոսատ (նոցա մօտ, որոնք յուսեալ էին գալոցում էին ուսանում), ուր նա ընդունեց անգլական եպիսկոպոսից եւ ընդհանրապէս հոգեւորականութիւնից մեծ սորբանքով։ Այս քաղաքում Մաշտոց գտաւ մի օմի «գրիչ հնգլեանկան գրչութեան», Հռոմանոս անունով եւ նրա գործածեցութեամբ կարգաւորեց իւր գրած նոր հայերէն այբուբենի «նորը, կարճ, երկայն. պարզ եւ բարդ» հնչիւնները։ Արանից անմիջապէս յետոյ, իւր երկու երեց աշակերտներին — Թովհան Եկեղեցական եւ Թովսէի Պաղանջաւո հետ միասին նա ձեռնարկում է

1 Նորայր («Քննադատ», Ե. 13—16, եւ հետագայութիւն կորիւնի մասին էջ 17) իրաւամբ անաշխարհում է կորիւնի բնագրի մէջ (էջ 9, տող 33, տեղ 1883) «ի յուսեալս եպիսկոպոսին», խորից յետոյ, «անաթ, բառից առաջ ոչ թէ վերջնական դեմ, ինչպէս գրուած է, ուղ միջակէտ, որ 1894 հրա. մէջ ուղղուած է։ Սրա հարկ եւ համարում աւելցնել, որ նոյն նախագաղութեան մէջ «գուժարեք, բառից յետոյ հարկաւ որ ոչ թէ անորոշական, ինչպէս գրուած է բոլոր աղագրութեանց մէջ, ուղ վերջնական միայն այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ Մաշտոցն երկուստորներին Սամոսատ ուղարկելուց յետոյ, ինքը մնաց Եփեսոսյանում։ Ի դէպ մի այլ որոգողութիւն եւս էջ 21, տող 20, «գիմաստութիւն», բառից յետոյ նոյնպէս պէտք է, ըստ իս, ստորակէտ եւ ոչ թէ վերջնական դեմ։

¹ «Պատմ. Հայոց» էջ 34։

² Ibid., էջ 36։

³ Այս մասին աւելի պարզ է խոսում Ղազար (էջ 37), քան Կորին (էջ 8)։

(Ս. Գրքի) թարգմանութեան սկսելով Սողոմոնի առակներէն: Այս թարգմանութիւնը արտագրուեց նոյն Հոռոփանոս գրչի ձեռքով, որը միեւնոյն ժամանակ վարժեցնում էր աշակերտներին Տայոց գեղագիր գրութեան: Կատարելով այս ամէնը Մ. Մաշտոց վերադարձաւ Հայաստան եւ իւր ջանքերի արդիւնները ներկայացրեց Վառձապուհ թագաւորին եւ Ս. Սահակ կաթողիկոսին:

Ահա թէ, իրապէս, ինչպէս պիտի մակարերել ըստ Կորնելի Տայոց նշանագրերի գիտի աւելի ստուգադոյն պատմութիւնը, որ այնքան հակառարար եւ խռոնաշիրոյթ են աւանդում յետին աղբիւրները, որոնց թուում նաեւ խորենացին:

Մասնաւորապէս, մեր Մովսէսին պիտի վերագրել Հետեւեալ, ըստ իմ կարեւաց, կամայական յաւելումներն եւ փոփոխութիւնները. — Վառձապուհ թագաւորի Միշղագետք երթալը, Պարսից Վառձ թագաւորի Տրամանով, երկիրը խաղաղացնելու, — բոլորովին անհասկանալի գծուարութիւններ, որ կրում էր այնտեղ Հայոց թագաւորը քարաւղար չունենալու պատճառով (Ս. Մաշտոցի աղբւնիքը թողնելուց յետոյ), «բանքն» բացատրում է մեր պատմագիրը հակառակ Ղազարի «Պարսկական Վարէին (ձորէին) գրով» (Գլ. Ժբ):

Այս բոլորը պակասում է նոյն իսկ Կորնելի երկրորդ խմբագրութեան մէջ, որ ինքնարկուած է Խորենացու այնչափ զօրեղ ազդեցութեանը:

Այնուհետեւ Խորենացու գրչին պէտք է վերագրել. — Հարէլ երեցի մասին առած ոչ այնքան պարզ տեղեկութիւնները, որին մեր պատմագիրը, բացի զբանից, վերագրում է Հայոց աշուրներն կազմելը, Գանիէլ եպիսկոպոսի օգնութեամբ, — եւ թագաւորի դեսպան Վահրիճի Մաղունի նախարարական ճղղեց սերուելը (Գլ. Ժգ):

Մինչեւ իսկ այս յաւելումներն եւս պակասում են Ս. Մաշտոցի կենսագրի Կորնելի երկրորդ խմբագրութեան մէջ:

Վերջապէս Ս. Մաշտոցի դէպի Միջագետք արած ճանապարհորդութեան մանրամասնութիւնները, այն է. — նրա այցելութիւնը Գաւիէլ եպիսկոպոսին, Եփեսոսի դիւանապետ եւ հեթանոս հետոր պղատոնին, — նրա ուղեւորութիւնը, ըստ ցուցման այս հոստոյի, Փիւնիէի աշխից Սամոս (ակնբերեւ եւ կղզին) այն հետորի ուսուցիչ, մեծ գիտնական Եպիփանին որոնելու նպատակով, — զուր որոնումն

այս վերջինիս, որ մեռած լինելով թողել էր իրեն աշակերտ Հոռոփանոս անտնով գրչին, — եւ ինչ որ մանաւանդ կարեւորն է՝ առաւելի գիտին նախընթաց հրաշալի տեսիլը, հասնողին հերուութեանց արձույթը «գրելով ի վերայ վեմիս, եւ, ը, ի, ու, ւ», եւ արանից անմիջապէս յետոյ Մաշտոցի ձեռնարկած (հին կտակարանի) 22 կանոնական գրքերի եւ նոր կտակարանի հոյերէն թարգմանութիւնը (Գլ. Ժգ), — այս ամէնը նոյնպէս պէտք է վերագրել մեր պատմաճօր հնարագիտութեան, որ այսու հանգերէ թերեւս օգտուել էր նաեւ յետին աւանդութիւններէն:

Այս բոլորը, կրկնում եմ ես, պէտք է վերագրել միայն մեր պատմաճօր հնարագիտութեան, թէեւ եւ նոյն առիթըր հեթանոս ճարտասան Պրատոնի, Հայոց նշանագրերը գտնողի դէպի փնէիկիս եւ Սամոս կատարած ճանապարհորդութեան եւ նրա հրաշալի տեսիլի մասին, մեք գտնում ենք բառացի նշեութեամբ նաեւ Ղազարի պատմութեան մէջ: Ինչդիրն այն է, որ Ղազար, ինչպէս վերեւն էլ յիշեցի Հետեւում է Կորնելի առաջին կամ հին խմբագրութեանը, որը Հայոց նշանագրերի գտնողին առանց բացառութեան «Մաշտոց» է կոչում, եւ բացի զբանից բնաւ անծանօթ են նրան, փոքր ինչ առաջ յիշեալ Մաշտոցի ճանապարհորդութեան առաւելեալ մանրամասնութիւնները եւ նրա հրաշալի տեսիլը: Մինչդեռ Ղազարի տպագիր հրատարակութիւններում, այս իսկ հատուածը առաջ է բերուած ոչ միայն համաձայն Մ. Խորենացու պատմման, այլ կատարելապէս յար եւ մասն նրան: Այս նմանութիւնը ինձ կասկածելի թուեց եւ ես գեւ 1901 թ. գիմեցի Ս. Էմմանուէլ, գիտնական Գալուստ ՏԵՐ-Միքայէլեանին. ինչդիրով համեմատել Ղազարի պատմութեան մեջ հետաքրքրող այս հատուածը Մայր-Ամբոի մասեւ, նադարանում գտնուած նոյն հեղինակի ծննդագիր օրինակներում: Համեմատութիւնից երեւաց, որ Ղազարի պատմութեան պահպանուած ամենաշին մի ձեռագիր օրինակի մէջ, այն է Թ. 611, ըստ ցուցակի Գեորգ կաթողիկոսի, վերջիշեալ հատուածը պակասում է, եւ նա ներմուծուած է Ղազարի պատմութեան 1774 թ. գրուած ձեռագրի մէջ՝ Մ. Խորենացու «Պատմ», Հայոց» առաջին հրատարակութիւնից, որ լոյս տեսաւ. 1695 թ. Ամստերդամում: Բայց որովհետեւ Ղազարի առաջին ապագիր հրատարակութիւնը (1793) 1774 թուին գրած ձեռա-

գրից էր, ապա ուրեմն հասկանալի է, թէ մեզ հետաքրքրող հատուածը ամբողջովին ընկաւ նաեւ Ղազարի պատմութեան բնագրի մէջ¹:

Որպէս զի համոզուինք, թէ խորենացին որպիսի կամայականութեամբ կերպարանափոխում է Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի յետագայ պատմութիւնը, պտանենք ինչ է հաջորդում կորիւնը նոցա մասին:

Հայոց նորագիւտ տառերը Հայաստան բերելուց յետոյ, Ս. Մաշտոցի ձեռքով մեր երկրում սկսւում է մտաւոր լուսաւորութեան մի զորեղ գործունէութիւն. դպրոցներում մտցնում են դասաւանդութիւն Հայոց լեզուի, բանում են նոր դպրոցներ եւ ամէն կերպ աշխատում են ժողովրդի մէջ հետաքրքրութիւն զարթեցնել դէպի աւսում եւ դպրութիւնը. գրանից զատ սկսում են թարգմանել հայերէն այլեւայլ գրուածքներ:

Արա հետ միաժամանակ Ս. Մաշտոց ու ղեւորւում է հայկական զանազան գաւառներ, առանձնապէս Գողթն եւ Սինիք, ամէն տեղ հիմնելով նոր դպրոց եւ յաջողութեամբ մտցնելով հայ դպրութիւնը. իսկ Վրաստանում եւ Աղուանքում օգտուելով իշխանաւորների հովանաւորութիւնից եւ հոգեւորականութեան աջակցութիւնից նա հիմք է դնում երկու ազգութիւնների դպրութեան՝ կազմելով նոցա համար առանձին այբուբեն:

Երբոր բուսականապի գործ կատարւած էր Հայաստանի պարսկական բաժնի մտաւոր եւ հոգեւոր լուսաւորութեան համար, Ս. Սահակ կաթողիկոսը եւ Մաշտոցը սկսեցին հոգ տանել նաեւ հայ ժողովրդի միւս կիսի մասին, օր գտնւում էր Եանայ կայսեր իշխանութեան տակ: Ս. Մաշտոց իւր աշակերտներից շատերի հետ անցաւ Հայաստանի յուսնական բաժինը, ուր, շնորհիւ նախօրօք տարածուած իւր բարի համբաւի, հանդիպում է փառաւոր ընդունելութեան ոչ միայն հոգեւորականութեան, ժողովրդի ու նախարարների, այլ եւ երկրի սպարապետ Անտիոքի² կողմից: Թեոդոս (Ի) կայսրը

տեղեկանալով վերջինից Ս. Մաշտոցի այցելութեան նպատակի մասին, հրամայում է ընդունել նրան «վայելուզ մեծանաթը» եւ արժանացնել ակումբոս (ἀχολύητος) հոգեւոր տիազոսին: Դբաւականանալով օրանով, Ս. Մաշտոց թողնելով իւր աշակերտների մեծագոյն մասը, նոցանից աւագագունի, Ղեւնդի հետ միասին Մելիտինէ քաղաքում տեղական եպիսկոպոսի Ալեկիոսի հովանաւորութեան ներքոյ, ինքը Գերգանի եպիսկոպոս Գինթի եւ աշակերտներից մի քանիսի հետ միասին ուղևորւում է կայսերական քաղաքը Ս. Պղոս, որտեղ նա փառաւոր ընդունելութիւն եւ պատիւ է գտնում Ատտիկոս պատրիարքից եւ Թեոդոս կայսրից, լիովին կատարւում են նրա խնդրերը — Հայոց լեզուն Հայաստանի յուսնական բաժնի դպրոցներում անտեղիւ եւ այդ դպրոցների պահպանութեան համար արքունիքի միջոցներ յառկացնելու: Ս. Մաշտոցի մայրաքաղաքից վերադարձը նմանւում է մի յաղթական գնացքի: ամէն տեղ ընդունւում են նրան արտակարգ պատիւներով, իսկ Եանական Հայաստանի սպարապետը, ստանալով Հայոց դպրոցներին վերաբերեալ կայսերական հրովարտակը, առանց յապաղելու սկսում է հրամարտածքի կատարածքը:

Այս ամենից յետոյ Ս. Սահակ եւ Մաշտոց հոգալով հայ դպրոցները զարգացնելու եւ ձոխացնելու մասին նորանոր թարգմանութիւններով, իրենց աշակերտներից երկուսին — Եովսէփին եւ Եղնիկին — ուղարկում են Ատրիք, որպէս զի նոցա այնտեղ զբաղուին ասորի Ս. Հաբը երկիրը հայերէն թարգմանելու: Այս թարգմանիչները, վերջացնելով իրենց աշխատութիւնը եւ ուղարկելով այն Հայաստան իւրենց ուսուցիչներին, ուղևորւում են Ս. Պղոս, յոյն լեզուն ուսուսնասիրելու եւ նրանով թարգմանութիւններ անելու: Այս երկուսին, մի քանի ժամանակից յետոյ, միանում են նոյն պէս ընկիւններից երկուսը — Ղեւնդը եւ Գորիւնը, որոք գալիս են կայսերական քաղաքը նոյն նպատակով: Այստեղ միաժամանակ մնալով եւ միասին գրական այլեւայլ աշխատանքներով զբաղւելով մեր թարգմանիչները վերագաւառում են հայերենը, իրենց հետ վերջընելով Ս. Գրքի ձգարիւ օրինակները, Ս. Հաբը բազմաթիւ գրուածքներ եւ Նիկիոյ ու Նիքեսոսի ժողովների կանոնները:

Ստանալով այս ձեռագիրները Ս. Սահակ, օր գեւ առաջ թարգմանել էր յուսնական

¹ Սրից համեմատութեան մանրամասնութիւնը տես յօդուած Է. Գ. Տէր-Մկրտչյանի «Արարտոյ 1801 թ. նոյեմ» «Գեղական» էջ 642-649. եւ առանձին տրամադր. էջ 1-8:

² Գորիւնի մեռագրից բնիկ Անտիոքի եւ Անտիոքի, որից պէտք է եզրակացնել, թէ լրջամբար անունն Անտիոք էր, մինչեւ խորեանացու ազգացութեամբ, որի մէջ (Գլ. 56) նոյն լրջօրօքը Անտիոք է կոչուած. Գորիւնի հրատարակիչները «Անտիոք» ընթերցողածը Անտիոքի են արտագրել: Գորիւնի Բ. Գ. խմբագրութեան եւս «Անտիոք» ունի համանայն խորեանացու:

ն ից՝ մի շարք եկեղեցական գրքերի եւ Ս. Հարց գրութեանքերի, նորից սկսեց թարգմանել եզ- նեկի հետ միասին այն (Ս. Գիրքը), որ առաջին յետոյ «փութանակի» թարգմանուած էր եւ բացի դրանից նաեւ այլեւայլ գրքոց բազմամիւ մեկնութիւններ:

(Հարաւսկէի)

ԳՐ. ԽԱՍԱԹԵԱՆՑ
Թրգմ. Ա. ՍԱՐԿ.



ԽՈՐԱՐՈՒԿ ԹՐԳՄԱՆՆԵՐ

ԵՐ ԻՐ ԵՐԿՐԱՐԻԹԻՒՆՆԵՐԸ

Անձանօթ անուններն չէ «խորովիլ», եւ քիչ շատ թարմ են մեր յիշողութեան մէջ այն ինքիւններն, որոնք յուզեցեան սակե տասնեակ տարիներ յառաջ անոր մասին եւ վերջերս բնագր- ձակ ուսումնասիրութեամբ մ'արարեց Մեծ. Գ. Վ. Եփեսեփեան: Երբ 1892ին Հնդք. Գարուստ Տեր Միքայէան Աւագոյայ Ապրիլ թուոյն մէջ կը հրատարակէր «խորովիլ թարգմանիչը վերա- գրով երկու պատասիկ, այն մասն զից էր, թէ խորովիլ նոյն անձնաւորութիւնն է, զոր կը յիշէ Ղ. Գարակչի: Իրմէ յառաջ Ազնանանց 1888ին Ար- Յաֆաի մէջ համարած էր այն խորովիլն է գարուստ Տէրը երկու յարգ. գիտնականք աշխատանք մէջ էին, ինչպէս ցուցուցին Արգիսեան եւ Տաշեան Հարց քննութիւնները: Այս ինքն թէ այն պատասիկ- ներէն երկրորդը որ հինգ լիւնեան երկարութիւնն մը համունք էր, ոչ թէ Ե կամ Զ գարուն գրուած է, հայապ Ը գարուն Օձնեցոյ ժամանակացիք մը: Սակայն կ'երեւայ վերջուիք էր այն ամէն յարգ- բանասերներու տեսութենէն իրենցմէ տարիներ յառաջ խորովիլայ եւ իւր գրութեանց մասին կարուած ըստ մասին ուղիղ վճիռն, որուն յետ երկար քննութեանց յանգեցան ապա: 1897ին Հայկազ- նեան թաւազարդ Հեղինակները (— Ազգերան) սոյն թաւազարդ Յառաջաբանին մէջ (էջ 13) իբրեւ եղբակցութիւն իրենց հետագոյսութեանց կը դրեն խորովիլայ մասին. «խորովիլ, որ եւ առ խորովիլ հետեւոր կամ խորովիլ թարգմանիչ, իբր մեկնիչ գրաւոր բանից, ի Ը գարուստ Սորա եւ Ճառ- ի վերայ քառասներորդական պահոյ ի Ճ. Ա.: Եւ խորովիլայ որոյն ինդիքը վիճողականք բնագրէմ Յունաց» ոգւով ժամանակակիցին իւրոյ Ստեփանոսի Սիւնեցոյ, գողանայ ինչ ինչ՝ շարագրութեամբ հանդերձ: Առանց գտնուել նշ տալով եւ յիմա- սուն բանից Եփեսեփեան իմաստասիրի: Վարդ գա- մնանայ ոճ հարթ եւ անհարթ. եւ բովանդակ գրուածն է խառնակ, եթէ չիցէ ձեռն մեծակ եւ

այլը իմաստակաջ բանորոտաց, Գ. Վ. Եփեսեփեան իւր «խորովիլ թարգմանիչ» եւ երկարութիւնք նորին աշխատասիրութեամբ, որուն առաջին մասն արդէն տուած էր 1899ին Աւագոյայ ընթերցող- ներուն, կը նոյնպէս մանրաբնից հետագոյսութեամբ ապացուցանել խորովիլայ ժամանակին Ը գար, ամէն յարակից ինդիքներէ հետեւեր. միանգամայն կու տայ գիտնական աշխարհին խորովիլայ գրու- թեանց սպասուած ընտրիւններն համեմատու- թեամբ իշխաննի մասնադարձի երեք օրինա- կաց: Երբ. Գ. Վ. Եփեսեփեան Ուսումնասիրու- թիւնն, որ առաջիկայ գրութեանս առիթ տուաւ, թէ եւ հետաքրքրական է եւ խորովիլայ մասին յարուցուած՝ եւ յարուցուելի ինդիքը լուծմանց տրուած են որամտութեամբ, սակայն այդու հա- նգին ամենայն մասնար բնորոշելի չենք կրնար համարիլ եւ կը նշույ տալանք վիճելի կետեր:

Երբ. Գ. Վ. Եփեսեփեան մէջ գլխաւորաբար պիտի ջանալը շարժանքակիւ հարցմանց պատա- խանել. նախ թէ Ո՞վ է խորովիլ, 2. Ի՞նչ երկու- սիրութիւն հասած է անոր անուամբ. 3. Ե՞վ է այն անձնաւորութիւնն, որուն դէմ կը գնին այն գրու- թեանց Հեղինակը Ա գրուած մէջ եւ վերջապէս 4. Թէ Ի՞նչ ժողով էր Ասորիւրայ Աթանաս պատ- իրաքի գումարածը, որոնց մասին թէ եւ մանրա- կրկիւ կը խոսի Եփեսեփեան, սակայն ըստ կարելոյն ջանալով չկրնիլ զաննք, վերադին պիտի յուզեց: Ա հարցման պիտի պատասխանեց երրորդն վերջը: Ի՞նչ երկարութիւնն հասաւ է խորովիլայ ձեռագրի մէջ: Այս հարցման պատասխանած է ընդգրկածորէն Եփեսեփեան, որուն հրատարակու- թեան մէջ հետեւեալներն կը գտնուէր.

Ա. խորովիլայ թարգմանիչ Հայոց, Առ- այնսիկ, որ ասեւ ընտրութեամբ անեւ, անսկիզբն ընկալալով զմարդկութիւն Առտուած Բանի կուսեւ:

Բ. Երբ. Գ. Վ. Եփեսեփեան զմարդկութեան Տերու- նական համագոյ ասեւ Բանի, կամ մարմնոյն եւ Բանի մի ընտրութիւն ասեւ, թէ ոչ:

Գ. Առ այնսիկ, որ յերկուս զմարդկայիւնք անշատեւ բնութիւն, այլ գլխ ասեւ յառաջ քան զյանցանուն եւ այլ գնին յանցանաց:

Դ. Առ այնսիկ, որ տարակուսին ի վերայ փրկչական կրից մարդկայնոց, թէ բնական պարտ է ասեւ թէ անբնական:

Ե. Նորուն խորովիլայ թուղթ առ Տեր Սարգիս եպիսկոպոս Գեարգիիւրայն: Այս ամենք խորովիլայ գրութեանց հաւաքածոյից մէջ գրեթէ միշտ քովն քով կը գտնուին: Առանց զատ այլ- եւ այլ հաւաքածոյից մէջ կը գտնուին Զ. «Հարց- մունք Նայրապարտի Ասորիւրայ ընդ խորովիլ Հայոց վարդապետ յաղագս զձեռնորն առնելոյ» (էջ 185— 197.) Ըստիւք եւ Եփեսեփեանի հրատարակածներն. Է. «Երբ. Գ. Վ. Եփեսեփեան, ասացեալ Տեառն խորովիլայ, որ տակաւին չէ հրատարակուած. ասոր վրայ քիչ մը գրաւ: Ուրիշ Հեղինակութեանց

«Հայոց առաքել գիւտից անմիջապէս յետոյ «Փու- թանակի, կոտարուած թարգմանութիւն (Ս. Գիրքի) ասե- լով, թէ երեւս պէտք է հասկանալ: Ս. Մաշտոցի ձեռագրով կոտարուած այն թարգմանութիւնը Ասորիւրայ, որը յետոյ նորից Ս. Մաշտոցի աշակերտները հետ միասին նայել, ստուգել եւ խմբագրել է Տիմոտ. Եղով յոյն օրինակ- ների վրայ:

1 Աղագապատ 1899—1903. 8⁰ էջք 110+210, Գրի 1 ր. 204:

2 Երբ. Գ. Վ. Եփեսեփեան եւ անձնաւորութեան Զ. Բառա- կաց յառաջաբանին խոսքերը: